



ԲԱԶՄԱՎԷՊ

Ի ՏԱՐԻ, ԹԻԻ 3

1862

ՄԱՐՏ 4

ՀԱՅԱԴԻՐ

Արեգ Ա. — Մարտի 9—21.

Ահաւասիկ Մարտ ամիս, որոյ կու սպասէինք չորս ցուրտ և երկայն ամիսներ. բոլոր բնութիւն կու հառաչէր կանչէր զմարտ. ոչ իբրև տարւոյ գեղեցկագոյն ամիսը, այլ պատճառ և մերձաւորիչ ամենայն գեղեցկութեանց. ոչ իբրև զապրիլ դալար, կամ գունաւոր իբրև զմայիս, ծաղկազարդ և պտղացոյց, այլ այդ ամենայն շնորհացնշան տուող ինքն է ծնող մանկագոյն և զուարթագոյն եղանակի տարւոյն, գարնայնոյն։ Վարունն դեռ եկած տիրած չէ, այլ ահա կու գայ և յառաջէ, և ձմեռն երթայ և հեռանայ։ Մեր կրակարանին ժամերն քիչնան. առաւօտն կանխէ, իրիկունն ուշանայ. գիշեր ու ցորեկ այս ամսոյս մէջ, այսօր՝ հաւասարին մէկմէկու, 12—ժամեայ մէկն, 12—ժամեայ մէկայն. և վաղը կու սկսի ցորեկն աճիլ և երկըննալ, գիշերն պակսիլ և կարճնալ։ Յորեկն աճելով իր թագաւորին, արեգական, ճառագայթնէրովը զարդարի. օդն կու զգայ և պահէ

տաքութիւն. ջուր և հող այլ զայն զգան. և ցամքած, սեցած, պնդացած երկիրն ձմեռուան ձիւնը և եղեամբ կու հալեցընէ և կակղանայ. և ահա հինգ վեց ամիս իր ծոցը թողեալ թաղեալ սերմանք, թմրեալ թուովեալ տունկը՝ ծայր արձրկեն, կանաչն ընծայուի, կարմիր կու գայ, ծաղիկ երեւայ։

Իրաւ դեռ մեր բարձրագիւր աշխարհին ամէն տափերն այլ իրենց կերպարանքը չեն փոխեր, և այս շնորհքներն չերևար վրանին. դեռ ձիւն և սառն յամառեալ բռնեն սարն ու ձորը. բայց ամենեւին անզգայ այլ չեն. տեղ տեղ ձմեռնային ալիքն՝ սկսին (մարդուս բընութեան հակառակ) սև խայծ առնուլ. հողն թէ և ոչ դալար՝ այլ գոնէ յայտնէ զինքն և ջանայ թօթուել վթայի ճերմակ թանձրութիւնը։ Մեր հիւսիսային խորահովիտներն, ևս առաւել արևելեան և հարաւոյ եզերքն՝ կ'առնուն բարեխառն կլիմայից հաւասար

գարնան գոյն և շնորհք. որք արդէն մեր դրացեաց և մեր դէպ ի հարաւ գաղթական եղբարց երկիրներուն վրայ համարձակ փայլին, և բնակիչքն զուարթացեալ ի գործ և ի զբօսանս հանեն: Ըհա թաղոս տիրոջ երգածայնն Երուսաղէմէն կու գայ:

Հա՛ մըտաք յամիս մարտին .
Օտուերն ամենայն ծաղկեն .
Հոտըն գայր գարնանային
Լոյսն ելնէ հայոց զատկին . . .

Սենք՝ թէ ծաղիկը և թէ լյան ամենուն հաւասար մաղթելով՝ լենք ուրիշ ճարտարագոյն երգչի և բազմաբուետ անձի մը, թերևս և հնագունի, որ Տիգրանակերտի կողմերէն կ'երգէ. նոյնպէս մարտի ծաղկանց հետ խառնելով զատկին յիշատակը, որ այս տարի ամենայն քրիստոնէից դեռ երկայն ամիս մ'այլ համբերել պիտի տայ. գոնէ գարունն այլ աւելի զարգացած կ'ըլլայ:

Սարտըն կու գայր ծաղկըներով
Երկնից հաւերըն կարգալով,
Հրեշտակապետք փառըս տալով .
Յորժամ հայոց զատկըն գայր :
Բարկ արեգակըն ծագեցաւ .
Սաստիկ ձըներըն հալեցաւ .
Գառն ու մաքին ընծայեցաւ .
Յորժամ հայոց զատկըն գայր :
Ըմպ ու երկինքըն խիստ գոռաց,
Ողորմութեան ցօղըն ցօղաց,
Օով ու գետերըն խիստ ծրփաց .
Յորժամ հայոց զատկըն գայր :
Ըղբերակունքըն յորդորին
Օառ ու ճրղերըն զարգարին,
Խոտ անասունքըն կերակրին .
Յորժամ հայոց զատկըն գայր :
Սարդապէս է դատեր մեղուն
Սողվեր ծաղիկն ի լեռներուն .
Ոչ վախենայ ի մեռելուն
Յորժամ հայոց զատկըն գայր :

Պիւլալիւ, զումրին՝ առաւօտուն
Եկեր դարձեր վարդին հոտուն,
Գանկատ կ'առնէր նա ի հողմոյն,
Յորժամ հայոց զատկըն գայր :
Կաքաւըն գայր սարէ ի սար
Կարկաչելով ի ձորն ի վայր
Օ Աստուած օրհնէր ինքն անգաղար,
Յորժամ հայոց զատկըն գայր :
Հաւ ու ձագերն հաւսարական
Սաղմոս ասեն նոքա լոման,
Ըղաղակեն առ տէր միայն .
Յորժամ հայոց զատկըն գայր :
Գաշտ ու սարերըն նորոգին
Եւ գերդ նոր հարսըն զարգարին,
Ի յատուծոյ փառաւորին,
Յորժամ հայոց զատկըն գայր :
Բար արտասուս բղխէ ըզձուր
Որպէս ըզծով եղեւ աղբիւր .
Սարդ ու ծաղիկն է համաստիււ .
Յորժամ հայոց զատկըն գայր :
Երուսաղէմ քաղաքն այսօր
Ըշխարհս ի հոն երթան յուսով .
Սուրբ Յարութիւն լոցվի լուսով,
Յորժամ հայոց զատկըն գայր :
Հայ ու հռոմըն խաչապաշտ
Ըմէն բոպիկ ու գլխիբաց
Ուրախանան լուսոյն դիմաց .
Յորժամ հայոց զատկըն գայր :
Տէրըն տացէ խաղաղութիւն
Եւ աշխարհի ուրախութիւն .
Հոտըն կու գայ անմահութիւն,
Յորժամ հայոց զատկըն գայր :
Իմաստասէրք ուրախանան
Եւ աստընվորըս լիանան,
Ըմէն մեղաց ձեռք լուանան,
Յորժամ հայոց զատկըն գայր :

Եւրոպիոյ մէջ այլ կան աշխարհք՝ ուր գարնան գալուն հանգէս մը կատարեն զատկի օրերը, բնութեան և շնորհաց հաճոյագոյն երկու յիշատակները յիրար զուգելով, զգարուն և զգատիկ. ինչպէս մեր երգիչն այլ, որ է մեծանուն արքեպիսկոպոսն Ըմգայ:

Մկրտիչ՝ Վաղաշ, թերևս մեր ամենէն նշանաւոր և ճարտար անձն ժեղարուն մէջ։ Ինքն հայկական Սիջագետաց ծնունդ և հոգևոր տէր բազմաթիւ վիճակաց այն կողմերուն՝ քան զչատերն առջ կու տեսնէր գարնան բերքը. և մեզի հետ կ'ողջունէր այս օրերս, և մեզմէ առաջ այլ՝ բաբելական կամ լալական ուռենեաց երկայն երկայն խարտեաշ խոպոպները, լեւակին տերւեները, լորոյն (tilleul) կարմիր բողբոջները. և արդէն պարկեշտ մանուշակ մը կապոյտ աչուրները կու բանայ իր անինամ մենարանէն, անուշիկ հոտ մը խառնելով անուշիկ հովի մը. և եթէ ասպատակող գնդի մը վերջամրնաց զօրաց նման՝ յանկարծ բարբարոս հովեր չփչեն, օրէ օր բուսաբերութիւնն յառաջէ, և գրեթէ դիտող աչք մը չկրնար հասնիլ անոր շուտ շուտ զարգանալուն։ Արդ տարակոյս չկայ. բնութիւնն նորոգուի, նորանայ. ծերացեալ տարին վերջանայ, կամ նորէն մանկանայ. եղանակաց և ժամանակաց սկիզբն դարձեր է. և արժան էր այս օրուրնէ սկսիլ քաղաքական տարին, ինչպէս որ բնականն ինքնին կու սկսի. և այսօր կարգել ինդարար նուիրամ սակր։ Յայսմ մասին շատ խելօք և իրաւամբ գործէին հին ժողովուրդք, որոց առջև մեք ծաղկեալ նոր ժողովուրդքս բաւական բարբարոսութեամբ կամ անտեղութեամբ՝ անյարմար միջոցէ մը կու սկսիմք մեր տարին, (ձմեռնային արևադարձէն 10 կամ 20 օր վերջը, 1 յունուար)։ Այն հին ազգերէն մինակ քիչ շատ անփոփոխ մնացած Նրեայն մինչև ցայսօր իր սրբազան տարին կու սկսի գարնան հետ, միայն թէ տարին արևու հետ համեմատելու ատեն՝ ամիսներն այլ լուսնի հետ կ'ուզէ յարմարընել, որով ոչ ճիշդ և ոչ միշտ գարնան հետ կամ այսօր կու սկսի տարին։ Բարեբաղդաբար, յայսմ՝ իր հետ և իրմէ հին ազգ մ'այլ կայ՝ որ նոյնպէս իր հին սրբազան տարեմուտը հաւատարմութեամբ նշանակէ իր տօմարին մէջ, և աւելի մեծ բազղով

կամ փառօք, մինչև ցարդ միշտ արժանապէս կու սկսի այդ տարին՝ երբ արևն անոր և իր սիրական խոյ աստեղատունը մտնէ, որ է ըսել սոյն օրս գարնանամտի, (9 — 21 մարտի)։ Այս ազգս՝ որ յայսմ մասին աւելի քան զՆրեայս, քան զՆոռոմս և քան զՆելլէնս, իմաստասէր մանաւանդ թէ ճշմարտասէր գտնուեր է, և այս գիւտը պահեր է՝ թերևս յանգէտս օտարաց, Նայ ազգն է. որոյ համար իրաւամբ պարծելով իր հին հեղինակաց մէկն, անոր աստուածատուր ճրից մէկը սեպելով իր տօմարն այլ, կ'ըսէ համարձակապէս, թէ Աստուծմէ առին «ըգտումարն, անդ Սովսէս, աստ ՏԱԵԿՆ յառաջ քան զնա», Վաղաքական սովորական տարինիս, ըստ ամենայն հին ազգաց (որոց ուամիկն ոչ երբէք աստեղաբաշխ կ'ըլլայ) շարժական և փոփոխական էր, նահանջ չընելով. այլ սրբազան տարին՝ հաստատուն է. որոյ սկիզբն ոչ ըստ քաղաքական տարւոյ, Նասասարդ ամիսն է, լատինաց օգոստոսի 11 — 23^ն հաստատեալ անշարժապէս, այլ բուն արեւո ամիսն, ԱՐԵԳ։ Բնաց օրացոյցդ, նայէ, կու տեսնես որ Արեգ ամիսն խոյի տանուտէրութեան հետ կու սկսի, որ է կէտն գարնանային գիշերահաւասարի. և ուրախութեամբ պարծէ նախնեացդ վրայ, որ այս գեղեցիկ բնական ճշմարտութիւնը անփոփոխ պահելով յաւուրց ջրհեղեղին՝ հասուցեր են մինչև 'ի մեզ, և մեզմով օտարաց, առեալ իրենց գերդիւցազնեայ նախահօրմէն, 'ի Նայկէն. որ ոչ միայն ճարտար շարժիչ էր աղեղան, այլ և թուոց և չափուց։ Միանգամայն և ցաւէ որ չեմք կրնար 'ի գործ դնել, և այս հին տօմարը զուգել նորոյն հետ և վարել։ Վաղաքական տարւոյ սկիզբան հանդիսից, Վաւասարդի, փոքր 'ի շատէ տեղեկութիւն ունիմք. այլ սրբազան տարւոյ և Արեգին սկզբան հանդէսներն՝ Նայկազանց խորհրդապահ քրմարանաց հետ ծածկուած են մեզմէ։ Եւստ է գիտելն և տեսնելն՝ որ իմաստութեամբ գարնան սկզբան

հետ Մքեգին սկիզբն այլ զուգէ և նը-
շանակէ այսօր Հայադիրն :

Այն Հայադիրն յափշտակելով զմեզ
'ի հնութիւն ժամանակաց, ներելի կ'ը-
նէ թողլու այսօր նորագոյն յիշատակ-
ները, և հնութենէ հնութիւն ելնել
'ի վեր քան զարեգն, և սկիզբն հայկա-
կան ամսոց, և նշանակէ այսօր յիշա-
տակ մ'այլ, որ ոչ մեր հիմկու աշխար-
հիս դարուց մէջն է, և ոչ այլ անկէ
առջինին, ալ երկու աշխարհաց մի-
ջոցն կրնայ ըսուիլ, նախաջրհեղեան
և յետջրհեղեան աշխարհքները միա-
ցընող կամրջոյն վրայ. որ է ծեր նաւո-
ղին՝ Այոյ տապանն : Սուրբ գրոց հետ
հաշուելով անոր 'ի տապանը մտնելուն
օրը, ըստ սրբազան ամսոց Աբրայեցւոց
(և ոչ ըստ քաղաքականին՝ որպէս ոմանք
կ'ընեն) ջրհեղեղին գալը և դադրիլը,
տապանին նստիլը 'ի լերինս Մարա-
տայ, պատուհանին բացուիլը և այն, այս
օրուանս այլ հանդիպի, տապանին ձե-
ղուան բացուիլն, այսինքն վրայի ծած-
քին : Տապանին 'ի լերինս Հայոց նըս-
տելէն ինչուան լերանց գլուխներն ջրէն
դուրս երևնալը երկու ամիս անցաւ,
յորմէ գուշակուի տապանին մեծու-
թիւնն և բարձրութիւնն. յետ 40 ա-
ւուրց բացուեցաւ անոր պատուհանն,
վասն զի ջուրն անկէ այլ վայր ի-
ջեր էր. և իբր յետ ամսոյ մը, այս
եղանակաց նորագութեան օրը՝ բացին
արգելականքն տապանին վերնածած-
քը, և իբրև տան դարպասներու կամ
դիտանոցի վրայ ելնելով՝ տեսան « զի
», նուազեալ էր ջուրն յերեսաց եր-
», կրի », նուազեալ էր այլ ոչ ցամա-
քեալ բոլորովին . վասն զի ասոր համար
դեռ երկու ամիս այլ սէտք եղաւ : Ի՞նչ
հիանալի և սրտառու տեսարան : Լ՛յն
լերանց կողմն՝ որոց տափի մը վրայ նստեր
էր տապանն, կ'արգիլէր համարձակ
տեսութիւնը՝ 'ի պատուհանէն . անոր
համար Այոյ կու ստիպուէր թուշուններ
արձրկելով և անոնց դառնալ գալէն
կամ չդառնալէն իմանալ ջրոց ցածու-
թիւնը և երկրին ցամբելուն չափը :

Իսկ հիմա իր 30—կանգնեայ նաւատան
դիտանոցին վրայ ելած իր համբերող
ընտանեօքը, կու տեսնէ այն ամրակերտ
ընդարձակ նաւը ծովային բերդի մը
պէս ամենաբարձր լեռնատափից միջոց
նստած . որոց ետեւէն՝ դէպ յարևելս,
յարևմուտս և 'ի հիւսիս դառնալով
Հայաստանի աւելի կամ պակաս բարձր
լեռներն կ'երևնան, ոմանք ամենեկին
լերկ ու մերկ նոր ջրէ դուրս ելածի
նման . ոմանք քանի մը ամսական ա-
րևու տաքութեամբ սկսած իբր աղուա-
մազով մը ծածկուիլ բարակ կանաչու-
թեամբ, որոց վրայ ծիրանափայլ ծի-
ծաղի արեգակն 'ի խոյի աստեղատու-
նէն . անոնց մէջ այլ կ'երևան խորա-
ձորք և հովիտք, և քանի մի դաշտք՝
իբրև վերջին աշնան կամ գարնան
սկիզբը արօրած պատրաստած սերմնա-
ցան և անբոյս սև արտեր : Իսկ հարա-
ւային կողմէն կ'երևան ծովածաւալ
դաշտք և անապատք Սիջազետաց և
Մորեստանի, որ յիրաւի դեռ, թէ ոչ
ծովու, գոնէ ճահճի պէս կու ծածա-
նին, և տեղ տեղ ցամբած, տեղ տեղ
ջրածածուկք, արևուն զարնուածքնե-
րէն իբրև փռած հայրներ կու ցո-
լանան : Արկու ամիս Այոեանք տապա-
նին երդիքէն դիտեն այս տեսարանը,
մանաւանդ թէ միշտ փոփոխեալ տե-
սարան մը, ջրոյն օր ըստ օրէ քաշուե-
լովն, և արևուն օր ըստ օրէ տաքնա-
լով՝ և այն դաշտաց վրայ տեղ տեղ ե-
րևցած տխրալի դէմքերը, աւերեալ
աշխարհի և խղղուած հասակաց և
գեղեցկութեանց մնացորդները բոլորո-
վին քայքայելով, ծածկելով, և թող-
լով միայն, տխրագոյն մնացորդ, չոր ու
ճերմակ ոսկորներ, այն հեշտամուլ փա-
փուկներուն, և այն յանդուգն հըս-
կաներուն՝ որք կարծեցին թէ միայն
երկրիս վրայ է մարդուս վիճակն . և
անիծեալք յերկնից՝ երկրէս այլ դուրս
'ի ծոց անդնդացեալ ծովուն ծածկե-
ցան, կերակուր կիտից և վիշապաց .
հազիւ թողլով սակաւ ինչ նշխար ծո-
վէն փոխած՝ իրենց հին բնակարանաց
քով . որոց հիմունքն անպամ տակնու-

վրայ եղած հողուն հետ խառնուած կորած են: Այս երկիր երկրորդ անգամ կ'երևնայ “ աներևոյթ և անպատրաստ ”, անպատ մը ամայի, անմարդաձայն, անկենդանի. յորոյ վրայ հազիւ իբրև պզտի շարժուն գծեր կամ բծեր՝ տապանին պատուհանէն արձրկուած թռչուններն թափառելով կ'անցնին իրենց դադար կամ բոյն բնտուելու: . . .

Մըջափ տարբեր էր այս երևոյթս երկրի՝ այն առաջին սկզբնական անպատրաստ վիճակէն ելած և նորակերտ զարդարածէն. երբ ձայնն և մատն արարչապետին՝ հինգ աստուածային օր՝ գործելով և ներգործելով, փոխեց զտարերս երկրի՝ ի բոյս և ի կենդանիս, պատրաստելով ի վայել զերագոյն արարածոյ մը՝ զոր անոնցմէ ետև պիտի ստեղծեր. և որոց այսօր իսկ յիշատակ է ըստ Հայադիր կարգի հետ գարնանամտի և բացման տապանին. այսինքն Մարտի 17 ամսոյն շանակի և վերջն ի 22, ստեղծմամբ մարդոյս: . . .

Ստեղծումն մարդոյս: — Ի՛նչ մեծ և արժանաւոր յիշատակ. ոչ այնքան հնութեամբ, որքան հիացմամբ մտաց և քննութեամբ: Մ՛վ կրնայ անտարբեր կենալ երբ իր սկզբան, մանաւանդ թէ սկզբանն սկզբնաւորութեան, և առաջին ծագմանն ինդիր մը ընկնայ ի միտքն:

Ըստ հեղ լեռնադաշտակի մը վրայ վայրի կաղնին տեսնալով ինչուան 100 ոտք բարձրութեամբ, որուն տերևազարդ թւերուն բոլորտիքը 5-600 և աւելի ոտք կու շրջապատէ, և շքին տակ հովիւ մը բոլոր իր հօտին կ'ապաստանի, և որոյ կռթռած բունն՝ պապուն պապուն այլ յենարան և հովանի եղած է. հիանալով այդ հին ու նոր հսկայ հասակին վրայ, որ ինչուան եօթ ութ հարիւր նոր գարնան ծիծաղեր և նոր ձմերանց դիմացեր է, զարմացմամբ հարցեր եմք. թէ ուսկից և ինչպէս առաջ եկած է. և աւելի զարմացմամբ լսեր եմք՝ թէ պզտի կո-

զակէ մը, բթաչափ կաղնիէ մը առաջ եկած է այդ ահեղ հսկահասակ բուսական նահապետն: Հապա այդ կաղնին. — այն այլ ասոր նման և ասկէ առաջ հսկայ ծառէ մը. — այն հին կորած վերցուած ծառն այլ ուրիշ կողակէ մը. և այսպէս մէկմէկէ: Ս'երջապէս, մանաւանդ թէ սկզբնապէս, ամենէն առաջ ո՞րն էր, կաղնին թէ կաղնին, ծառն թէ կուտն. կամ որ նոյն է՝ ըստ բիրաբայ փիլիսոփայից, հա՛ւն թէ հաւկիթն: Իրենց ինդիրքն և քննութիւնը դեռ այս մեծ հարցման պատասխան չեն կրցած տալ. և դեռ հաւերը թուցնելով հաւկիթները զորքընելով առաջ կ'երթան, ինչուան որ յուսահատած գլուխնին զարնէն վերջինին և դադրին: — Ս'ենք հաւանեալ և հաւատացեալ եմք մովսիսական աստուածաշունչ գրոց պատմութեան, որ ամենէն առաջ մեզի ցուցանէ զտիեզերս իբրև ամենածրար ձու մը ստեղծուած յանժամանակէն Մտուծոյ, որոյ հօգին իբրև հողաթւ համասփիւռ հաւ մը՝ գրգայր ի վերայ անդնդապտոյտ տարուբերեալ տարերայն, հրամանաւ կամայն կոչելով և կոկելով ի զանազան ձև և բնութիւն, որով միանգամայն կերպացաւ կաղնին առանց կաղնի և հաւն առանց ձուոյ:

Ս'եր սկիզբն այլ այս կանոնով եղաւ, բայց արձուագոյն կերպով մը աղնիւ բնութեան համեմատ: Մ՛վ ի հաւատացելոց՝ իր կրօնական և պատմական ուսմանց սկիզբը չէ լրած չէ սորված զայն. բայց անգամ մ'այլ հրաշալի մարգարէին գրոց գլուխը, և կարգաքու սկզբանդ սկզբնաւորութիւնը, մարդոյն ստեղծագործութիւնը: Արամ թէ ուզես, մտացդ վրայ հեծած թըռիւր մինչև քու հայրենիքդ, եղեմական սահմանները, և դեռ զրախտին մէջ չմտած՝ անկէ դուրս և քիչ մը հեռու (բայց մի մինչև ի Վամասկոս)¹ ընտ-

1. Վասն զի ոմանք զԱրամ ի Դամասկոս ստեղծուած կ'ըսեն. և անկից կ'ըսէ ոմն այլ Աստուած ձեռքը ճակտին վրայ դրած քշեց քանի մը ժամուան մէջ հասուց յԱյրարատ:

րէ դարատափ կամ ձորավայր մը . դի-
 ցուք թէ ըլլայ մեր հին Սրմանց , (թե-
 րևս և Սերմանց) լեռներուն մէջ , որ
 հիմա Պինկէօլ կ'ըսուին . և անկէ
 վերանալով պատմական ժամանակաց
 սկիզբը , տէս նկատէ հոն իջած՝ յա-
 ռաջ քան 'ի Սինա , և յառաջ քան
 'ի Վորեբ՝ մէկ մեծ թեթև ու շար-
 ժուն բրգան պէս բան մը , իբրև ամ-
 պով , ծխով , լուսով , բիւրեղով ձու-
 լուած . որոյ միջէն կարծես տեսնել
 մարդկային կերպարանաց ուրուական
 մը , որ ծիրանի գօտւոյ նման ընդարձակ
 գիրկ ու թւեր շարժելով , և իր ստու-
 ըտը եղած կաւային հողի կոշտ մը
 քրքրելով՝ յիրաւի քեզի մեզի նման
 նիւթական կերպարանք մը վեր կու-
 կանգնէ : Այլ ստեղծուածներէն տար-
 բեր և ազնուագոյն կենդանւոյ մը կա-
 ղապար կ'երևի . որ հազիւ երկու թա-
 թով գետինը կոխած , ուղղաձիգ վե-
 րանայ երկնադիտակ բոլորակ գլխով .
 երկու կողմէն թւեր արձրկած , ոչ
 թռչելու յարմար , այլ իբրև փարելու
 իրեն նմանւոյ մը հետ , կամ թէ նոյն
 իսկ իրեն ստեղծողին՝ երբ ճանչնայ
 զայն : Տեսածնիս դեռ անկատար կա-
 ղապար մ' է . անշարժ , անյարդ , ան-
 զարդ պատկեր մը , բայց Աստուծոյ
 պատկեր ըլլալ գուշակուի . կաւակերտ
 կարմրակերտ արձան մը , որ կարծես
 թէ ներսէն կենդանանալու աշխատե-
 լով՝ մասն քրտան կայլակներ թորէ բո-
 լոր զանգուածէն դուրս , զոր երեկոյեան
 զովագին հողմիկն կամաց կամաց ցամ-
 քեցնելով կու ձերմըկցնէ , կ'ամփոփէ .
 և իբրև հեռուէն մօտեցնելով աչքիդ՝
 հետզհետէ յայտնագոյ ցուցնէ մարդ-
 կային կերպարանք . նախ եզիպտա-
 կան արձան մը կարծես զայն , վերջը
 կովկասեան կերտուած մը , յետոյ մն-
 մէ մարդ մը . հիմա բուն մարդ ըսել
 չըսել չես գիտեր , վասն զի բան մ' է ,
 բայց ոչ կենդանի և ոչ մեռեալ , ոչ 'ի
 քուն և ոչ արթուն . այլ այնպիսի՝ որ
 ոչ անուն ունի և ոչ ձիշգ պատկեր մը
 մեր հիմակուան գաղափարաց մէջ :
 Իսկ հրաշագործ ձարտարապետն՝ իբր

թէ պահ մը կիսկատար թողով իր ա-
 մենէն զարմանալի շէնքը՝ կու դիտէ ա-
 նոր չափակցութիւնը , և ծանրութեամբ
 ու մտածմամբ կ'ուզէ այդ կաւեղէն
 պատկերին ազդել ողորկութիւն , գոյն ,
 շարժումն , շունչ , կեանք , զգացումն
 հողի և բան . և այս ամէն ըսած-
 ներս՝ իր դիտելուն և հաճելուն ա-
 տեն՝ կ'ազդին կ'երևնան իր ձեռա-
 կերտին վրայ Տես , ինչ շուտ շուտ
 այդոր արտաքին երևոյթն կակղած կու
 կած սկսաւ փայլիլ , հետզհետէ մոմա-
 գոյն , մոխրագոյն , շուշանագոյն , ծի-
 րանեգոյն , վերջապէս մարմնագոյն .
 և այնքան բարակ ու փափուկ , որպէս
 թէ թափանցիկ մաշկ մը միայն ծած-
 կեր ներքին զարմանալի մեքենայն , և
 իբրև աղակոյ մը տակէ ցուցնէր
 կապուտաթել ջղեր և երակներ
 Ահա յանկարծ բոլորակ գլխէն ինչուան
 ուսերը ընծուեցան արձրկեցան սև սև
 գունդ գունդ խոպ խոպ փունջեր , բայց
 իբրև պղնձի անդրիի մը վրայ՝ անշարժ
 են . աղօտ աղօտ արշալուսէ մը ծագած
 առաւօտու պէս յանկարծ կ'երևան
 բարակ թարթափք և յունից կամար-
 ներ , որոց տակ երկու մարգարտափայլ
 գողքկան , մէջտեղուանքնսև աղամանդ .
 անշուշտ ճանչցար աչքերը , բայց անոնք
 զքեզ չեն ճանաչեր , քեզի չեն նայիր , չեն
 շարժիր . սառնամած լճակներ են , ծած-
 կուած ախուք են , որ կ'ուզեն լոյս առ-
 նուլ և լոյս տալ Եղիցի , ուրեմն ,
 լոյս անհամբերութիւն կանչես . եղիցի
 լոյս 'ի վերայ այդ սքանչելի դաստակեր
 տիդ , և եղիցի դա կենդանի պատկեր
 Աստուծոյ Եւ ահա եղև լոյսն կեն-
 դանի : — Կու տեսնե՞ս . անգրին մարդ
 կ'ըլլայ . կ'ըլլայ ըսելու չմնար , կաւէ
 կաղապարն Աշամ եղաւ : Ինչպէս ե-
 դաւ , ուսկից եկաւ այն ճառագայթն ,
 այն գոյներն , այն շարժումն դեռ
 վայրկեան մը , բողիկ մը , պիկ մը իկ
 մը առաջ՝ պատկեր էր , հիմա անձն
 է : Ասան զի հրաշագործն՝ աստուա-
 ծային երագութեամբ դպաւ այդոր
 ճակտին , և մէկէն արձանին մեքենա-
 ներն սկսան շարժիլ : Դիտե՛ դա գան .

գուր գիտականներն՝ Թնչպէս բարդ բարդ ծփան. նայէ դա շիկորակ շրթանց շարժմունքը, դա զմուռնաւ աչաց հրեղէն թաւալմունքը, երկխորշեայ ռնգանց բարակ շնչաուռ թիւնը, դա գեղեցիկ գլխոյն հեզիկ պտոյտքը, դա ճօճ թւոց թափ տալը. դա դուրյթ տուող ոտից դոփիւնը, որ ոչ միայն անդրին՝ ի պատուանդանէն կտրեցին, այլ բոլոր անձին ներքին ազդուածքէն ուժ առած՝ այնպէս սաստկութեամբ մը գեանին կից կու տան, որ օգտապարիկ գունտէն աւելի շոյտ և բարձր պիտի ցատքէր յերկնից միջոց, թէ որ դեռ ճակտին վրայ չըլլար մատն աստուածային. որ իբրև ամեհի երիվար մը՝ սանձով, կամ ծխով հողմով զինուած պատրաստ նաւ

մը՝ խարսխով, դեռ բռներ է զայն. բայց այնպէս մը կ'երևայ՝ թէ հազիւ և ոչ ընդ երկար կրնայ համբերել բռնուածն: Եսկ աստուածայետականն յետին հաճութեան ժպիտ մ'այլ տալով, իր անքննելի ծոցէն կու փչէ նորաշէն պատկերին վրայ շունչ մ'այլ. շունչ բանական, աննիւթ և անապական, որով բողբոլին կ'ըլլայ կատարուի մարդն. և հաղորդ աստուածային զօրութեան, աստուածային երագութեամբ մը ճանչնալով ինք զինքն, և Թնչպէս և ուստի ըլլալն, միանգամայն աչքով և շրթանք, թւօք և ծնօք, սրտիւ և բերանով, բանիւ և հոգւով կանչէ՝ ԱՍՏՈՒԱՎ ԻՄ:

Հ. Ղ. Մ. Ա.

Գեղարտ¹:

Գեղարտս յայնժամ ի ծանրատաղտուկ պքսորն ի Արեւտէ Փակ էր անդնդովք եւ ի հայրենին կարօտ ի յերկրէ:

« Թեպէտ ըզցամաք արգելու, ասէ, եւ զալիս ծովուն,

» Սակայն առաջի մեր բաց են երկինք, երթիցուք ընդ սոյն.

» Թէ եւ համայնից տիրեսցէ Մինովս, ոչ տիրէ օդոյս »:

Ըսէ, եւ անդէն նորոց արհեստից անկանի ի յոյզ:

Փոխէ ըզբնութիւն, փետուրըս հաւու արկանէ ի կարգ.

Օ երկայն ըզփոքու յարելով ըզհետ ի կարճէն ցաւագ:

Որ այնպէս գողցես ի բնուստ էր աճեալ ի զառ ի վերակ,

Իբր ի հովուական շարին յերգիծն տողազոյգ վարսակք.

Եւ լարով ընդ մէջ եւ զծայրսն մոմով պընդէ հաստատուն,

Գալարէ դուն ինչ՝ զի ճըլգրիտ ի տիպ գործեսցէ հաւուն:

Մանուկն իկարէ կացեալ առնթեր, եւ բնաւ անգիտակ,

Թէ անձամբ անձին ըզմահանացուն հինէր ըզվտանգ.

Օ ուարթերես դիմօք՝ մերթ ըզփափկահերս ընտրէր ի փետրոց

Յորոց ի շարժիւն բաւեսցէ շնչել հեզասիգ հողմոց.

Եւ մերթ ըզխարտեաչ մոմըն լըմելով բոյթ մատին ի ծայր,

Մանկաբար խաղուք ըզհօրն արգելոյր սրխրալի արար:

Ձեռնարկեալ գործոյն մինչ յամբոկ եհաս՝ կշուեցաւ յայերս.

Ինքնին իսկ ճարտարն յեցեալ յերկոսին յիւրակերտ ի թեւս,

1. Գեղարտ է մին ի ճարտարահիւս այլաբանութեանցն Ուիգեայ. իսկ թարգմանութիւնն միոյ ի հարց մերոց, երիցագոյն քան զմեզ ժամանակաւ. զոր յանուանէ ոչ ընկիմբ ստուգութեամբ աղել: